Սիսիան համայնքի 2026 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները

ԾՐԱԳԻՐ

Սիսիան համայնքում բնապահպանական վճարներով իրականացվող միջոցառումներ

1.Ծրագրի համառոտ նկարագրությունը և նպատակները

Ծրագիրը մշակելիս հաշվի է առնվել Սիսիան համայնքում արդի համարվող բնապահպանական հիմնախնդիրները, դրանց ուղղությամբ նախորդ տարիներին կատարված աշխատանքները և առաջիկայում պլանավորվող անելիքները:Սիսիան համայնքում գործող քարի արտադրամասերի և «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ»ՓԲԸ գործունեության արդյունքում առաջացող բնապահպանական խնդիրները մեղմելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ունենալ համայնքի բնապահպանական ծրագիր: Իրականացվող ծրագրի գլխավոր նպատակն է հնարավորինս նվազեցնել շրջակա միջավայրի՝ մթնոլորտի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունները՝ ապահովելով շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանումը: Կազմակերպությունների կողմից արտադրության վնասակար արտանետումների ցուցանիշը նվազեցնելու, կյանքի որակը բարելավելու, կանաչապատ համայնք ունենալու համար նախատեսվում է Սիսիան քաղաքի Սիսական և Իսրայելյան փողոցների կանաչապատման համար նախատեսված շուրջ 5500 քմ տարածքում տնկել թվով հարյուր քսան կեռիկավոր արծաթագույն եղևնիներ և թվով յոթանասուն տույաներ:Նշված փողոցների մայթերի մի մասը բարեկարգված են, մնացածը նախատեսվում է բարեկարգել առաջիկայում:Նշված բնապահպանական խնդիրները մեծ ազդեցություն են ունենում նաև մարդկանց առողջության վրա,և խնդրի լուծումը առաջնահերթ է համարվում նաև առողջապահության տեսանկյունից:Բնապահպանական խնդրի լուծման առաջնային շահառուներն են համարվում Սիսիան համայնքի բնակիչները, ինչպես նաև համայնք այցելող զբոսաշրջիկները և հյուրերը:

2.Ծրագրի իրավական հիմքերը

Ծրագիրը իրականացվելու է Սիսիան համայնքի վարչական տարածքում գործող ձեռնարկությունների կողմից արտադրական գործունեության հետևանքով շրջակա միջավայր վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական վճարներիվ համայնքին կատարված մասհանումների միջոցով:

Իրավական հիմքեր	**Նկարագրություն**
«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին»ՀՀ օրենք	Հոդված 3-րդ 1-ին մաս Ծրագրի նախագիծը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված տվյալ մարզի կամ համայնքի զարգացման կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերի կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության փաստաթղթերի հիման վրա
ՀՀ կառավարության 26 սեպտեմբերի 2002թ. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների առաջնայնությունների և դրանց ֆինանսավորման համամասնությունները «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին»ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն հաստատված և առաջիկա տարվա պետական բյուջեով նախատեսված ծրագրում համայնքի ավագանու կողմից առաջարկվող փոփոխությունները ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության հետ համաձայնեցնելու կարգերը հաստատելու մասին N1544-Ն որոշում:	Նշված որոշմամբ սահմանվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները ու դրանց ֆինանսավորման համամասնությունները ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության հետ համաձայնեցնելու կարգը:
ՀՀ վարչապետի 20 հունվարի 2022թ. «ՀՀ 2023թ. բյուջետային գործընթացը սկսելու մասին» N 72-Ա որոշումը:	ՀՀ վարչապետի 20 հունվարի 2022թ. «ՀՀ 2023թ. պետական բյուջեի մշակման գործընթավի ՀՀ 2023-2025 պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2023թ. պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույց»

3.Ծրագրի իրականացման արդյունքներն ու ծախսերը

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ծառերի ձեռքբերում Սիսիան համայքի տարածքում: Աշխատանքների նախահաշվային ընդհանուր արժեքը կազմում է 4.164.000 (չորս միլիոն հարյուր վաթսունչորս հազար) ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման լրացուցիչ ծախսերի առաջացման դեպքում համայնքը սեփական միջոցներից կտրամադրի լրացուցիչ հատկացումներ ծրագրի ամբողջական իրականացման համար: :Հաշվի առնելով ,որ ծրագրի իրականացումը կնպաստի համայնքի բնապահպանական խնդիրների լուծմանը, օդի աղտոտվածության նվազեցմանը, խնդրում ենք մեր համայնքին տրամադրել համապատասխան միջոցներ ծրագրի իրականացման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎՀԱՆԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կատարող՝ Ե.Եղիազարյան
Հեռ.՝(094)815213